

ցականներուն, և աներկիւղ ու համարձակ բողոքեց այն ամէն անկարգութիւններուն դէմ, որոնք կը գործուէին Արեւելքի մէջ և գայթակղութեան առիթ էին Արեւմուտքի: Այդ յանդիմանագիրին մէջ որ Գրիգոր Կեսարացի յատուկ թղթատարով մը՝ Ասլան զպիրի ձեռքով հասուցած է Արեւելք, մասնաւորապէս ձեռքը նաեւ Մովսէս Տաթևացիի (որ զայն ստացած է 1615 Օգոստ. 27ին), խօսուած են բազմաթիւ գայթակղալից արարքներու, և Մելքիսեդեկի անձնապէս կատարած բազմապիսի ապաշնորհութեանց վրայ:

Հոն մասնաւորապէս կ'ըսէ թէ «մանաւանդ քան զամենայն մեծ չարիքն այս են, որ զո՞ն ձեռագիրն ետուր Փափուն, քե՛ ես Մելքիսեդ կաթողիկոս Հայոց՝ իմ ազգիս վարդապետօ՞՛ եպիսկոպոսօ՞, եւ համայն ժողովրդով՝ հնազանդիմք Հռոմայ եկեղեցւոյն, եւ ընդունիմք զժողովն Քաղկեդոնի, եւ ըզտումարն Լեւոնի, եւ նզովեմք զԴեոսկորոս եւ համախոհն նորա, եւ ասեմք ի Քրիստոս երկու բնութիւն եւ երկու կամք, եւ այս ձեռագրիս օրինակն Փափն գրել ե պասմայ գրով եւ յուղարկել ե ի Լեհ. նոյնպէս եւ յամենայն տեղիս, քե՛ ազգն Հայոց ի մեր հաւատն եւ դարձեր, այլ եւ ի վանասիկ եւ յայլ բազում տեղիս գիր ե գրեր եւ յլրկեր. եւ